ՊԱՇՏՕՆԱԿԱՆ-Ք

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀՈՎՎԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՑԸ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՀԱՅՈՑ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԹԵՄ՝ ՀԻՄՆԱԴՐՈՒԹՅԱՆ 90-ԱՄՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԻԹՈՎ

Հոկտեմբեր 25

Տարվույս հոկտեմբերի 25-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ԱՄՆ Հայոց արեւմտյան թեմի հաստատման 90-ամյակի առիթով, հովվապետական այցով մեկնեց Ամերիկայի Միացյալ Նահանգներ՝ հրավերով թեմական առաջնորդ Գերաշնորհ Տ. Հովնան արք. Տերտերյանի եւ թեմական խորհրդի:

ԱՄՆ Հայոց արեւմտյան թեմը կազմավորվել է 1927 թվականին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեւորգ Ե. Սուրենյանցի հայրապետական կոնդակով: Թեմի գործունեությունը տարածվում է երկրի արեւմտյան նահանգների վրա՝ ընդգրկելով 25 ծուխ: Առաջնորդարանը 1957 թվականից ի վեր գտնվում է Լոս Անջելեսում: Թեմի տարածքում գործող հին հայկական եկեղեցիներից են Ս. Պողոսը (1900-ից, Ֆրեզնո), Ս. Գրիգոր Լուսավորիչը (1910-ից, Ֆաուլեր), Ս. Աստվածածինը (1911-ից, Կոստա Մեսա), Ս. Սահակ-Մեսրոպը (1923-ից, Ֆրեզնո), Ս. Հովհաննեսը (1924-ից, Սան Ֆրանցիսկո), Ս. Վարդանը (1924-ից, Օքլենդ), Ս. Հակոբը (1953-ից՝ Վեն Նայսի Ս. Պետրոս եկեղեցին, Սակրամենթո), Ս. Պետրոսը (1958-ից, Վեն Նայս), Ս. Անդրեասը (1964-ից, Քուփերթինո), եւս 20 եկեղեցիներ այլ քաղաքներում: ԱՄՆ Հայոց արեւմտյան թեմի առաջնորդարանին կից, ի նպաստ Հայ Եկեղեցու ազգապահպան ու եկեղեցապահպան առաքելության, գործում են Հայաստանյայց Եկեղեցու երիտասարդական կազմակերպության, տիկնանց միության, կիրակնօրյա վարժարանների կենտրոնական խորհուրդներ՝ իրենց մասնաճյուղերով, ինչպես նաեւ՝ կրթական, մշակութային ու բարեսիրական այլ կառույցներ:

Թեմը յուրաքանչյուր եկեղեցուն կից ունի հայոց լեզվի կիրակնօրյա եւ շաբաթօրյա դասընթացներ՝ հայկական նկարագիրն անկորուստ եւ ոգին անշեջ պահելու առաքելությամբ: Սկսյալ 1979-ից՝ հայերեն եւ անգլերեն բաժիններով լույս է տեսնում ԱՄՆ Հայոց արեւմտյան թեմի

«Մայր Եկեղեցի» պաշտոնաթերթը՝ թեմի հոգեւոր-կրթական եւ մշակութային գործունեության լուսաբանմամբ:

Իննսունամյա պատմական հարուստ անցյալ ունեցող ԱՄՆ Հայոց արեւմտյան թեմի հոբելյանի առիթով հովվապետական այցի ընթացքում Նորին Սրբությանն ուղեկցող շքախմբում էին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի դիվանապետ Գերաշնորհ Տ. Արշակ եպս. Խաչատրյանը, Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Հոգեշնորհ Տ. Գարեգին վրդ. Համբարձումյանը, Հայրապետի գավազանակիր Հոգեշնորհ Տ. Աղան աբդ. Երնջակյանը, Կաթողիկոսական գրասենյակի քարտուղար Արժանապատիվ Տ. Ադամ քհն. Մակարյանը, Մայր Աթոռի բարերար Տիար Գաբրիել Զեմբերջյանը, ինչպես նաեւ Հառիճի Թրբանճյան ընծայարանի շրջանավարտ, Գեւորգյան հոգեւոր ճեմարանի վեց սաներ: Հայրապետական պատվիրակությանը Միացյալ Նահանգներում միացել էին ԱՄՆ Հայոց արեւելյան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Խաժակ արք. Պարսամյանը, Կանադայի Հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Աբգար եպս. Հովակիմյանը, ԱՄՆ Հայոց արեւելյան թեմի էկումենիկ կապերի պատասխանատու եւ թեմական նվիրակ Գերաշնորհ Տ. Վիգեն արք. Այքազյանը:

Հոկտեմբեր 26

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ԱՄՆ Հայոց արեւմտյան թեմ հայրապետական այցելության շրջանակում հոկտեմբերի 26-ի առավոտյան այցելեց «Վաչե Մանուկյան» դպրոց եւ հանդիպեց աշակերտության հետ՝ իր հայրապետական օրհնությունն ու հայրական խրատները բերելով նրանց:

Հարյուրավոր դպրոցականների հետ Վեհափառ Հայրապետի հանդիպմանը ներկա էին նաեւ բարերարներ տեր եւ տիկին Վաչե եւ Թամար Մանուկյանները, ՀԲԸՄ նախագահ տիար Պերճ Սեդրակյանը եւ հավատացյալ բազմաթիվ հայորդիներ:

Աշակերտները Վեհափառ Հայրապետին դիմավորեցին Հայրապետական մաղթանքի երգեցողության քաղցր հնչյունների ներքո: Երախտագիտության խոսք ասվեց ուսուցիչների անունից՝ անդրադարձով Վեհափառ Հայրապետի արդյունավոր գահակալությանը եւ անուրանալի վաստակին ազգապահպան առաքելության մեջ: Կրթական հաստատության սաները հանդես եկան գեղարվեստական հոգեպարար կատարումներով՝ հուզմունքով լցնելով Հայրապետի եւ ներկաների սրտերը: Հավարտ միջոցառման՝ Նորին Սրբությունն իր հայրական օրհնությունն ու մաղթանքը փոխանցեց սաներին ու մանկավարժներին եւ դպրոցին նվիրեց քրիստոսահուշ խաչքարի մանրակերտ:

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՀԲԸՄ ՎԱՉԵ ԵՎ ԹԱՄԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ ԴՊՐՈՑԻ ՍԱՆԵՐԻ ԵՎ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՆԴԻՊՄԱՆ ԱՌԻԹՈՎ

(26 հոկտեմբերի 2017 թ.)

Գերաշնո՛րհ առաջնորդ Սրբազան,

Գերաշնո՛րհ, հոգեշնո՛րհ, արժանապատի՛վ հայրեր,

Հարգարժա՛ն տեր եւ տիկին Վաչե եւ Թամար Մանուկյաններ,

Հայկական բարեգործական ընդհանուր միության մեծարգո նախագահ պարո՛ն Մեդրակյան,

Մեծազնի՛վ բարերարներ Հայկական բարեգործական ընդհանուր միության ու Վաչե եւ Թամար Մանուկյան դպրոցի,

Սիրելի՛ հոգաբարձուներ, ուսուցիչներ, շա՛տ սիրելի ուսանողներ եւ ներկաներ.

Մեզ համար մեծ ուրախություն է, որ հովվապետական Մեր այցի առաջին օրը մասնակից ենք այսպիսի միջոցառման հայկական դպրոցի հարկի ներքո՝ դպրոցի սաների, մանկավարժների, սաների ծնողների, մեր բարեպաշտ զավակների ներկայությամբ: Մեր բարձր գնահատանքն ենք բերում Հայկական բարեգործական ընդհանուր միությանը, որն իր առաքելության մեջ մշտապես կարեւորել է կրթական գործը, ամենուրեք հաստատել դպրոցներ, որպեսզի հայ մանուկը կարողանա այդ հաստատության ներքո կրթվել ու դաստիարակվել եւ ազգի արժանի զավակը լինել:

Այսօր Հայկական բարեգործական ընդհանուր միության անվան կողքին ընթերցում ենք մեր ազգի արժանավոր զավակների՝ մեծ բարերարների անուններ՝ տեր եւ տիկին Վաչե եւ Թամար Մանուկյաններ: Մեզ համար պատահական չէր, որ տեր եւ տիկին Վաչե եւ Թամար Մանուկյաններն ստանձնել են հովանավորությունը կրթական այս հաստատության, քանզի ճանաչում ենք նրանց՝ վկան լինելով, թե ինչպիսի նախանձախնդրությամբ նրանք Անգլիո մեջ ծնված իրենց զավակներին կրթեցին, դաստիարակեցին հայաշունչ ոգով, որպեսզի լիարժեք տիրապետեն հայերենին, ազատ հաղորդակցվեն իրենց մայրենի լեզվով: Մենք Մեր բարձր գնահատանքը եւ երախտագիտությունն ենք բերում մեծ բարերարներին այն բոլոր նվիրաբերումների, ազգային ձեռնարկների ու ծրագրերի համար, որոնք իրականացրել են մեր կյանքում. դրանց շարքում է նաեւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում նրանց անունով գործող Սուրբ Էջմիածնի «Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանը:

Սիրելիներ, Մենք վստահություն ունենք, որ այս հաստատության հարկի ներքո պետք է հասակ առնեն պանծալի հայորդիք, արժանավոր զավակներ մեր ազգի: Մեր առջեւ տեսնում ենք արդեն հասուն երիտասարդներ՝ ինչպես այս հաստատության հարկի ներքո ուսանող, այնպես եւ Մանուկյան ու Դեմիրճյան վարժարանների սաներ:

Սիրելի՛ սաներ, տարիների ընթացքում դուք հասակ եք առնում, աճում, զորանում ֆիզիկապես, բայց նաեւ աճում, զորանում եք մտքով, այն գիտելիքներով եւ փորձառությամբ, որ ստանում եք կրթական հաստատություններում, ձեր ընտանեկան հարկերից ներս, նաեւ մեր Եկեղեցում հոգեւոր հայրերի խնամքի ու նրանց՝ ձեզ փոխանցած պատգամների շնորհիվ: Դուք գիտեք, որ մեր ժողովուրդը մեծապես կարեւորել է կրթությունը, հայկական դպրոցը, որի հարկի ներքո է կոփվել նկարագիրը հայորդու, լուսավորվել միտքն ու հոգին, կերտվել հայ մշակույթը, մեր անանց արժեքները, որոնցով այսօր հպարտանում ենք բոլորս, որոնք պատիվ են բերում մեր ժողովրդին ու փառավորում նրա անունը ազգերի շարքում: Հայտնի խոսք է՝ ազգը առանց կրթության նման է մարմնի, որ չունի միտք:

Մեր հայրերը կարեւորել են նաեւ մեկ այլ արտահայտություն՝ «Լաւ է կոյր աչօք, քան կոյր մտօք»: Ահա թե ինչու Մեր հոգին լի է բերկրանքով, երբ այս հաստատության հարկի ներքո հանդիպում ենք կրթության նվիրյալների եւ մեր ապագա սերնդի, ազգին հույսեր բերող շնորհալի Մեր զավակների հետ: Վստահ ենք, որ այս հաստատության հարկից պիտի դուրս գան անձեր, ովքեր իրենց գործերով, իրենց բարի արդյունքով առավել պիտի զորացնեն ազգային մեր կյանքը:

Սիրելի՛ զավակներ, Հայրական սիրով օրհնում ենք ձեզ, մաղթում ուսումնասեր հոգի, քաջեռանդություն: Թող ձեր սրտերին միշտ հարազատ ու սիրելի լինեն հայոց լեզուն, հայրենի ավանդն ու հիշատակները եւ օրինակը՝ արդար ու բարի գործերի: Ինչպես այսօր հայկական սփյուռքն իր կազմակերպված կյանքով ուժը, զորությունն է նաեւ մեր հայրենիքի, դուք էլ ձեր կարողություններով, ձեր արգասիքներով առավել պիտի զորացնեք ինչպես համայնքային կյանքն այստեղ, այնպես եւ՝ մեր հայրենական ու ազգային կյանքը:

Մեր գնահատանքն ենք բերում դպրոցի հոգաբարձուներին, մանկավարժներին՝ հորդորով ու պատգամով, որ նույն նախանձախնդրությամբ եւ հոգատարությամբ շարունակեն իրենց նվիրյալ աշխատանքը, կրթեն ու դաստիարակեն զարգացած եւ հոգեւոր ու ազգային նկարագրով զորեղ սերունդ: Հոգատարությունը մեր նորահաս սերնդին, սիրելի՛ մանկավարժներ, նշանակում է հոգատարություն մեր վաղվա օրվա, մեր ապագայի նկատմամբ: Մեր հայցն ու աղոթքն ենք բարձրացնում առ Աստված, որ Տերն արդյունավոր դարձնի ներդրված ջանքերն այս հաստատության հարկից ներս, որ այստեղ ուսանող սաները բազում արգասիքներով արժեւորեն այն ներդրումները, որ կատարվում են Հայկական

բարեգործական ընդհանուր միության եւ ազգային մեծ բարերարներ տեր եւ տիկին Վաչե եւ Թամար Մանուկյանների կողմից:

Թող Տիրոջ օրհնությունը հովանի լինի հայ կյանքի եւ հայոց կրթական հաստատությունների վրա, մեր նոր սերնդի, մեր երիտասարդ հայորդիների վրա, որ նրանցով միշտ վառ ու լուսավոր լինեն ազգիս հույսերը, զորեղ լինի մեր հայրենիքը, պայծառ՝ մեր Սուրբ Եկեղեցին՝ իր նվիրական Սուրբ Էջմիածին կենտրոնով, որպեսզի մենք հավատով, հույսով շարունակենք մեր կյանքը՝ կերտելու հզոր, առաջադեմ, զարգացող Հայաստան՝ բարօր, ապահով, լուսավոր կյանքով մեր ժողովրդի: Տերը թող օգնական ու պահապան լինի մեզ ամենքիս»:

Նույն օրը Վեհափառ Հայրապետն այցելեց «Արարատ տուն», որտեղ խնամվում են հայ տարեցները: Նորին Սրբությունն իր գնահատանքը հայտնեց հաստատության խնամակալ մարմնին եւ աշխատակիցներին, ինչպես նաեւ մտերմիկ զրույցի ընթացքում Հայրապետական իր օրհնությունն ու բարեմաղթանքը բերեց տարեցներին:

Հավարտ Նորին Սրբության այցի պատվին կազմակերպված հանդիսավոր ճաշկերույթի եւ գեղարվեստական հայտագրի՝ Վեհափառ Հայրապետի ձեռամբ կատարվեց «Արարատ տան» նոր մասնաշենքի հուշաքարի օրհնության արարողություն: Հայոց Հայրապետը խնամատար հաստատությանը նվիրաբերեց Գեւորգ Սուրենյանցի «Տիրամոր» սրբապատկերի կրկնօրինակը:

Երեկոյան Սրբոց Ղեւոնդյանց առաջնորդանիստ Մայր եկեղեցում տեղի ունեցավ «Հրաշափառ»-ի արարողություն՝ ներկայությամբ թեմի հոգեւոր դասի եւ բարեպաշտ բազմաթիվ հավատացյալների, քույր Եկեղեցիների ներկայացուցիչների ու բարձրաստիճան այրերի:

Հավատավոր ժողովրդին ուղղված խոսքում Նորին Սրբությունն իր շնորհավորանքն ու բարեմաղթանքը բերեց թեմի հաստատման 90-ամյակի առիթով՝ բարձր գնահատելով ամերիկահայության ձեռքբերումները եւ հաջողությունները համայնքի ազգային-եկեղեցական կյանքում՝ ի պայծառություն Հայ Եկեղեցու քրիստոսանվեր ու ազգապահպան առաքելության: Վեհափառ Հայրապետը ամերիկաբնակ հայորդիներին մաղթեց Աստծո ամենառատ շնորհներն ու օրհնությունները՝ հորդորելով, որ աստվածահաճո կյանքով, անսպառ եռանդով, ազգային ու հոգեւոր կյանքի բարօրության եւ պայծառության տեսլականով շարունակեն իրենց եկեղեցաշեն ու ազգօգուտ գործերը: «Հրաշափառ»-ի արարողությունից հետո հավատացյալները մոտեցան Վեհափառ Հայրապետի օրհնությունն ստանալու:

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՀՐԱՇԱՓԱՌԻ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆԸ

(26 հոկտեմբերի 2017 թ., Բրրբենք, Սրբոց Ղեւոնդյանց առաջնորդանիստ Մայր եկեղեցի)

«Մի բան եմ խնդրել Տիրոջից եւ նույնն եմ աղաչում, որ կյանքիս բոլոր օրերին բնակվեմ Տիրոջ տանը»
(Սղմ. ԻԶ. 4):

Սիրելի՛ բարեպաշտ զավակներ Մեր,

Տիրոջ կամքով ու օրհնությամբ վերստին Հովվապետական այց ենք կատարել Միացյալ Նահանգների Արեւմտյան թեմ: Եկել ենք՝ կիսելու ձեզ հետ տիրահնամ թեմի հիմնադրման 90-րդ տարեդարձի ուրախությունը: Այս առիթով ջերմորեն ողջունում եւ հայրական Մեր սերն ու օրհնությունն ենք բերում ձեզ ամենքիդ՝ թեմակալ առաջնորդ Գերաշնորհ Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանին, հոգեւոր դասին, եկեղեցու վարչական ծառայությանը լծված նվիրյալներին եւ հավատացյալ հայորդիներին:

«Մի բան եմ խնդրել Տիրոջից եւ նույնն եմ աղաչում, որ կյանքիս բոլոր օրերին բնակվեմ Տիրոջ տանը»: Սաղմոսերգուի այս խոսքը մեր ժողովրդի հոգու բյուրեղացած իղձն ու ամենաջերմ աղոթքն է եղել դարեր շարունակ՝ այն օրից ի վեր, երբ ապրվածճանաչողության լույսը ծագեց մեր երկրում Տիրոջ սուրբ առաքյալների քարոզությամբ: Տիրոջ տանը բնակվելու իղձով ու հավատքով կառուցել ենք մեր աղոթատները եւ համախումբ մնացել Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու օրհնության ներքո: Մեր հավատքը դարձել է մեր ժողովրդի ազգային ինքնության առանցքը, մեր հարատեւության, մեր բոլոր հաղթանակների ու ձեռքբերումների անսպառ աղբյուրը: Ապրել ու արարել ենք Տիրոջ անունով, ավերվածը շենացրել ու կառուցել ենք հավատքի հրաշագործ ուժով, մահը կյանքի վերածել՝ ապավինած Քրիստոսի խոսքին, որ Տերը մեզ հետ է «մինչեւ աշխարհի վախճանը» (Մատթ. ԻԸ. 20):

Ինսսուն տարիներ շարունակ ԱՄՆ Արեւմտյան ափերում եւս գրվում է մեր ժողովրդի հավատքի լուսավոր պատմությունը, որի հեղինակները ձեր հավատավոր հայրերն են ու դուք՝ նրանց արժանավոր որդիները: Այստեղ՝ մեր եկեղեցիների հովանու ներքո, սերունդներ են հասակ առել, նախնյաց հավատքին, սուրբ ժառանգությանը հաղորդ դարձել, իրենց ինքնությունը պահպանել: Սիրելինե՛ր, թեմի հիմնադրման 90-րդ տարեդարձը հրավեր է, որ վերարժեւորեք հայ համայնքի անցած ուղին, ձեռքբերումներն ու իրագործումները, սակայն առավելաբար հրավեր է հոգեւոր վերարթնության, որ վերահաստատեք ձեր կամքն ու վճռականությունը՝ ապրելու հավատքով, հայրենի ավանդների հան-

դեպ նախանձախնդրությամբ եւ նոր կորովով շարունակեք ձեր ջանքերը՝ ի սեր մեր Սուրբ Եկեղեցու եւ տիրախնամ ձեր թեմի պայծառության: Միշտ հիշեք՝ ձեր զորեղ հավատքով է, որ ուժ ու զորություն պիտի ստանան տիրախնամ ձեր թեմն ու ամերիկահայ համայնքները, բազմամարդ ու աղոթքով լեցուն լինեն ձեր եկեղեցիները, սրբանան հայ ընտանիքները, ամրանան ու հայությամբ շնչեն հայ դպրոցները, ծաղկեն ու արգասավորվեն ազգային կազմակերպություններն ու հաստատությունները: Այս ընթացքով միայն դուք, սիրելիներ, մեր ողջ ժողովուրդը, սաղմոսերգուի խոսքերով, պիտի շարունակի բնակվել Տիրոջ տանը, զորանալ եկեղեցիների օրհնյալ հարկի ներքո, վայելել Աստծո խնամակալությունը, ստանալ Փրկիչ մեր Տիրոջ օգնությունն ու աջակցությունը:

Սիրելիներ, վերստին Մեր ուրախությունն ենք հայտնում, որ 90-ամյա հոբելյանը նշելու համար ձեզ հետ ենք եւ Մեր շնորհավորանքներն ենք բերում ամերիկահայ բոլոր զավակներիդ՝ մաղթելով Աստծո ամենաառատ շնորհներն ու օրհնությունները: Հայրապետական Մեր օրհնությունն ու բարձր գնահատանքն ենք բերում թեմական առաջնորդին՝ Գերաշնորհ Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանին, հոգեւոր դասին, հոգեւորականաց առաքելությանն աջակցող թեմական ու ծիսական խորհուրդների, կրթական, ազգային, մշակութային հաստատությունների պատվարժան անդամներին ու աշխատակիցներին:

Առ Աստված աղոթքով մաղթում ենք, որ աստվածահաճո կյանքով, անսպառ եռանդով, ազգային ու հոգեւոր մեր կյանքի բարօրության եւ պայծառության տեսլականով շարունակեք ձեր եկեղեցաշեն ու ազգօգուտ գործերը՝ բարեզարդելով Ամերիկայի հայ համայնքի պատմությունը:

Թող Ամենակալ Տերն Իր անսպառ օրհնության մեջ պահի Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին, եւ Իր Սուրբ Աջի ամենախնամ հովանու ներքո շնորհի աշխարհասփյուռ մեր ժողովրդին «բնակել ի տան Տեառն զամենայն աւուրս»:

Շնորհը, սերը եւ խաղաղությունը մեր Տեր Հիսուս Քրիստոսի թող լինեն ձեզ հետ. ամեն:

Հոկտեմբեր 27

Հաջորդ օրը՝ հոկտեմբերի 27-ի առավոտյան, ԱՄՆ Հայոց արեւմտյան թեմի Սրբոց Ղեւոնդյանց առաջնորդանիստ եկեղեցում Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպում ունեցավ հայկական դպրոցների եւ վարժարանների աշակերտների հետ:

Հայորդիները Վեհափառ Հայրապետին դիմավորեցին մեծ խանդավառությամբ, ծափողջույններով եւ Հայրապետական մաղթանքի քաղցրալուր երգեցողությամբ: Ողջույնի խոսքից հետո կրթական հաստատությունների ուսուցիչները եւ սաներն իրենց շնորհավորանքի խոսքն ուղղեցին Վեհափառ Հայրապետին՝ կաթողիկոսական ընտրության տաս-

նութերորդ տարեդարձի ուրախ առիթով եւ խորհրդանշական հուշանվերներ հանձնեցին նրան:

Կրթական հաստատությունների սաները հանդես եկան գեղարվեստական կատարումներով՝ հայրենասիրական եւ ոգեշունչ երգ ու պարով: Այնուհետեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր Հայրապետական օրհնությունը, բարեմաղթանքներն ու եկեղեցասիրության, ազգասիրության եւ հայրենանվիրումի հորդորները փոխանցեց աշակերտներին, ուսուցչական կազմին ու հավատացյալների բազմությանը:

Մանուկներին ու պատանիներին ուղղված խոսքում Նորին Սրբությունն ի մասնավորի ասաց. *«Հայաստանը, Սուրբ Էջմիածինը դո՛ւք եք, սիրելինե՛ր, ձեզանով է հզորանալու հայրենիքը, շենանալու ազգային-եկեղեցական կյանքը: Այսօր այս հանդիսման ընթացքում Մենք խնդությամբ տեսանք, թե որքան քաջ եք դուք մայրենի լեզվի իմացության մեջ, որքան եք սիրում Սուրբ Էջմիածինն ու Հայաստանը, թեպետ հեռու եք հայրենիքից: Ձեր սիրելի ծնողները, ձեր պատվական մանկավարժները խնամում ու դաստիարակում են ձեզ իբրեւ հարազատ զավակները մեր ժողովրդի եւ այն լուսավոր տեսիլքով, որ դուք մարմնավորելու եք մեր ժողովրդի նվիրական իղձերը: Լավ սովորե՛ք, աճե՛ք ու զորացե՛ք գիտելիքներով եւ իմացությամբ: Ձեր հոգիներում վառ պահեք սերը Աստծո հանդեպ, հետեւեք Տիրոջ պատվիրաններին, եղեք նախանձախնդիր ու պատասխանատու զավակներ ձեր ծնողների ու մեր Եկեղեցու եւ ազգի համար: Հորդորում ենք նաեւ, որ այցելեք հայրենիք, Սուրբ Էջմիածին, ձեր աչքերով տեսնեք մեր նախնյաց հիշատակները եւ ձեր սրտով զգաք նրանց պատգամը հավատքի ու հայրենասիրության: Մենք հանապազ աղոթում ենք ձեզ համար՝ հայցելով, որ Փրկիչ մեր Տերը պահապան Իր Աջի հովանու ներքո օրհնի եւ շնորհազարդի ձեզ, որ ուշիմ մտքով եւ պայծառ հոգով աճեք ու կատարելագործվեք եւ ձեր ավանդը բերեք ազգային ու հայրենական մեր կյանքին»:*

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը մաղթեց նաեւ, որ Տերը հանապազ պահապան լինի բոլոր դպրոցների պատասխանատուներին ու մանկավարժներին՝ պայծառ պահելու հայկական կրթօջախները՝ հանուն ազգային ու հոգեւոր կյանքի աննվազ զորության, մեր ժողովրդի բարի հույսերի եւ լուսավոր գալիքի կենսագործման:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն Աստծո օրհնությունը հայցեց պատանիների եւ նրանց ընտանիքների համար, որ Տերը նրանց հաստատուն եւ անշեղ պահի ազգանվիրումի ու եկեղեցասիրության մեջ:

Այնուհետեւ Նորին Սրբությունը պատասխանեց աշակերտների հարցերին եւ նվերներ փոխանցեց ԱՄՆ Հայոց արեւմտյան թեմի հայկական դպրոցներին ու վարժարաններին:

Հոկտեմբեր 28

Հընթացս ԱՄՆ Հայոց արեւմտյան թեմ հովվապետական այցելության՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը հոկտեմբերի 28-ին Սրբոց Ղեւոնդյանց Մայր եկեղեցու հանդիսությունների սրահում հանդիպում ունեցավ շաբաթօրյա դպրոցների աշակերտության հետ: Հանդիպումն սկսվեց Տերունական աղոթքի քաղցրահունչ երգեցողությամբ: Բացման խոսք ասաց «Փոքրիկ հրեշտակներ» շաբաթօրյա դպրոցի տնօրեն Հովհաննես սարկավագ Գումրույանը: Դպրոցների սաները հանդես եկան երգերով, դաշնամուրային ինքնատիպ կատարումներով: Երեւանից ժամանած՝ Արմեն Տիգրանյանի անվան երաժշտական դպրոցի սաները այս հանդիպումը, ինչպես եւ ԱՄՆ Հայոց արեւմտյան թեմի հաստատման 90-ամյակի միջոցառումները զարդարեցին բարձր վարպետությամբ կատարած գեղեցիկ երգերով՝ ներկայացնելով հայ կոմպոզիտորների ստեղծագործությունները: Այնուհետեւ առանձին երգացանկով հանդես եկան Գեւորգյան հոգեւոր ճեմարանի սաները: Խոսք տրվեց նաեւ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Հոգեշնորհ Տ. Գարեգին վրդ. Համբարձումյանին, ով հանդիպման մասնակիցներին ներկայացրեց մանրամասներ Հայ Եկեղեցու հոգեւոր-կրթական առաքելության եւ ի մասնավորի՝ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի գործունեության վերաբերյալ: Հանդիպման գեղարվեստական մասից հետո խոսք ասաց նաեւ ԱՄՆ Հայոց արեւմտյան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Հովնան արք. Տերտերյանը՝ բարձր գնահատելով հայ դպրոցների լուսավորչական առաքելությունը, արժեւորելով հայության շունչն ու ոգին արթուն պահելու ջանքերը, հորդորելով սիրով եւ հավատարմությամբ ընձյուղված մնալ Մայր հայրենիքին եւ Սուրբ Էջմիածնին:

Այնուհետեւ Սրբազան Հոր առաջնորդությամբ դպրոցների սաները միասնաբար բարձրաձայնեցին իրենց սուրբ ուխտը՝ հավատարիմ մնալու մեր հայրերի ավանդած սրբալույս հավատքին եւ այն կենսունակ պահող Մայր Աթոռ Ս. Էջմիածնին, սիրելու հարազատ աշխարհն Հայոց ու պահպանելու ազգային ինքնության առհավատչյա հանդիսացող մեսրոպատառ հայերենը: Այս սքանչելի խորհրդին հաջորդեց Հայրապետական մաղթանքի երգեցողությունը:

Հանդիպման ավարտին օրհնության եւ քաջալերանքի խոսք ասաց Վեհափառ Հայրապետը՝ նշելով, որ երեխաների անմեղ սրտերից բխած աղոթքը լսելի պիտի լինի Աստծուն, եւ Նա քաղցրությամբ պիտի ընդունի հայորդիների հավատարմության ուխտը հայրենիքին, Եկեղեցուն եւ Սուրբ Էջմիածնին՝ Իր շնորհառատ օրհնության մեջ պահելով նրանց, որ ապրեն երջանիկ՝ իրենց ծնողների, մեր ժողովրդի եւ հայրենիքի սիրո

մեջ: Նորին Սրբությունը քանքարների մասին ավետարանական առակի օրինակով եւ խորհրդով հորդորեց սաներին Աստծուց ստացած շնորհները լավագույնս գործադրել հոգեւոր ու ազգային անդաստանից ներս եւ պատգամեց հայոց մեծերի խոսուն օրինակով դառնալ ազգին ու Եկեղեցուն արժանի զավակներ: Վեհափառ Հայրապետը գնահատանք հայտնեց դպրոցների պատասխանատուներին ու մանկավարժներին, ծնողներին, հոգեւոր սպասավորներին՝ նոր սերնդի կրթության եւ դաստիարակության գործում նրանց նվիրումի եւ իրականացվող աշխատանքի ու ջանքերի համար:

Նույն օրը Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպում ունեցավ նաեւ թեմի երիտասարդների հետ: Նորին Սրբությունը պատասխանեց երիտասարդներին հուզող հարցերին եւ հորդորեց նրանց ապրել հավատքի կյանքով, լինել Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու, մեր ժողովրդի ու հայրենիքի արժանավոր զավակներ: Վեհափառ Հայրապետը կարեւորեց երիտասարդների նոր նախաձեռնությունները՝ ի նպաստ Հայ Եկեղեցու առաքելության արդյունավորման: Ամենայն Հայոց Հայրապետն ընդգծեց նաեւ ամերիկահայ երիտասարդության ուխտագնացությունների անհրաժեշտությունը հայրենիք՝ որպես լավագույն առիթ հաղորդ դառնալու նախնյաց սուրբ հիշատակներին ու ավանդներին, զորացնելու իրենց հավատքն ու հայրենասիրությունը:

Ստորեւ ներկայացնում ենք զրույցն ամբողջությամբ.

Վեհափառ Հայրապետ - Տոնախմբում ենք ԱՄՆ-ում Հայոց արեւմտյան թեմի հաստատումը: Իննսուն տարի առաջ մեր ժողովրդի զավակունք, ջարդերից մազապուրծ, կայք հաստատեցին Միացյալ Նահանգներում: Նրանք այստեղ կառուցեցին եկեղեցիներ, դպրոցներ, ազգային հաստատություններ, որ իրենց զավակները մեծանան՝ պահպանելով ազգային ոգին, գիտակցությունը եւ այդ ավանդները փոխանցեն սերնդից սերունդ: Բնական է, որ ժամանակի ընթացքում պետք է ունենայինք նաեւ կորուստներ՝ լեզվի, մշակութի եւ ոգու: Բայց փառք ենք տալիս Աստծուն, որ, այդուհանդերձ, թեմը մեծացել եւ զորացել է: Այս նոր իրավիճակում պետք է կարողանանք արթուն պահել հոգեւոր-ազգային ինքնագիտակցությունն ու նկարագիրը: Հայ երիտասարդները պետք է գիտակցեն, որ իրենք հայ ազգի, Հայ Եկեղեցու զավակներ են, առաքելություն ունեն ազգային կյանքում, եւ այս երկրում հայ ազգի շարունակականությունը պայմանավորված է նաեւ իրենց անձնական ներդրումով: Հայերեն սովորելու նախանձախնդրությունն է պետք արթնացնել հայ երիտասարդի մեջ: Ազգային ոգու վերարթնացումը կարող ենք իրականացնել ոչ միայն այստեղ ազգային կառույցներ ձեւավորելով, այլ նաեւ Մայր հայրենիքի հետ նրանց կապը ապահովելով: Հայաստան կատարած մեկ այցը ոգեփոխություն է առաջ բերում հայ երիտասարդի մեջ:

Հայաստան գալը ներշնչման աղբյուր, ազգային ինքնության բացահայտման բացառիկ հնարավորություն է յուրաքանչյուրի համար: Սիրելի՛ երիտասարդներ, մնացեք հաղորդ, ներգրավված եկեղեցական եւ ազգային մեր կյանքին, եւ ձեր հոգին կբացվի, ձեր գիտակցությունը կզորանա, եւ միշտ կլինեք ազգի արժանավոր զավակներ:

*Հարց - **Աստված ինչպե՞ս գոյություն ունի, Աստծո գոյության ապացույցը ո՞րն եք համարում:***

Վեհափառ Հայրապետ – Այդ ապացույցը մեր պատմությունն է, մեր ժողովրդի գոյությունը, մեր իրականությունը: Հակառակ բազում փորձությունների, հայոց բազմաթիվ գողգոթաների, հակառակ մահվան վիհերի՝ մեր հավատքը մնացել է զորեղ, հաստատված ասպվածաշնչյան խոսքի վրա՝ «Եթե Աստված մեզ հետ է, ո՞վ կարող է մեզ հակառակ լինել»: Աստծո գոյության ապացույցը ասպվածճանաչ հոգուց բխող ազնիվ ու բարի արգասիքներն են, որոնք պիտի առատացնենք մեր կյանքում՝ ամուր պահելով քրիստոնեական մեր հավատքն ու արժեքները:

*Հարց - **Ի՞նչ է պետք ասել մեկին, որը քրիստոնյա չէ, որին ուզում ես դեպի Աստված ուղղորդել:***

Վեհափառ Հայրապետ - Պետք է օգնել, որ դեպի Աստված տանող ճանապարհը գտնի: Եթե հանդիպեց Աստծո հետ եւ Նրա օրհնությունն զգաց իր կյանքում, կքայլի Նրա հետեւից:

*Հարց - **Մեզ՝ հայ երիտասարդներիս, ի՞նչ կթելադրեք, ինչպե՞ս մեր հավատքը զորեղ պահենք եւ զորացնենք մեր Եկեղեցին:***

Վեհափառ Հայրապետ – Աղոթե՛ք, կարդացե՛ք Ավետարան, հաղորդակցվեք մեր սրբություններին, մեր սրբազան ժառանգությանը, ըմպեք այդ արժեքներից, եւ ձեր հավատքը զորեղ կլինի, երջանիկ կզգաք այդ հավատքի մեջ:

*Հարց - **Հայաստանում երիտասարդներն ի՞նչ դեր ունեն Եկեղեցու աստվածպաշտական կյանքում:***

Վեհափառ Հայրապետ - Հայրենիքում յոթանասուն տարի մեր ժողովրդի զավակները քրիստոնեական մեր արմատներին հաղորդակցվելու, Եկեղեցու կյանքին մասնակից լինելու հնարավորություն չեն ունեցել: Այսօր հոգեւոր վերարթնության օրեր ենք ապրում, երիտասարդները նույնպես նախանձախնդրությամբ ներգրավվում են եւ գործուն դերկատարություն ունեն մեր եկեղեցական կյանքում՝ շնորհիվ այն աշխատանքի, որ կատարվում է հոգեւորականների կողմից: Համայնքներում, բուհերում ստեղծվում են երիտասարդական միություններ: Եկեղեցականները ծառայություն են մատուցում բանակում, եւ այս ճանապարհով եւս կրթվում է հոգեւոր գիտակցությունն ու քրիստոնեական ոգին երիտասարդների:

*Հարց - **Ո՞րն է Հայաստանի ապագայի Ձեր տեսիլքը:***

Վեհափառ Հայրապետ - Մեր տեսիլքը պայծառ, զորեղ, բարօր կյանքով ապրող երկիրն է եւ մեր երկրին ու ժողովրդին ծառայություն բերող Եկեղեցին, որպեսզի եւ հայրենիքը, եւ մեր Եկեղեցին միշտ հարազատ տուն լինեն մեր զավակների համար:

*Հարց - **Միշտ չէ, որ եկեղեցի գնալու ժամանակ եմ ունենում, եւ հավատս գնալով տկարանում է: Ինչպե՞ս կարելի է դա կանխել:***

Վեհափառ Հայրապետ - Առաջին հերթին պետք է վճռել եւ ժամանակ տրամադրել Աստծո հետ լինելու համար: Պետք է կարողանալ հոգին պատրաստել, որ այնտեղ բնակվի Աստված: Եթե դրա համար ժամանակ չգտնեք, ձեր հոգին երբեք չի դառնա Աստծո տունը: Բացեք ձեր հոգին Աստծո առջեւ, եւ Նա կբնակվի այնտեղ: Իսկ երբ հանդիպեք Աստծուն, երջանկությամբ կլցվի ձեր կյանքը:

*Հարց - **Ի՞նչ է անում Եկեղեցին, որ երիտասարդներն իր մասը դառնան:***

Վեհափառ Հայրապետ - Քիչ առաջ հանդիպեցինք հայկական դպրոցների երեխաներին: Այդ դպրոցները ճանապարհներ են, որոնցով Եկեղեցին փորձում է փոքր տարիքից երեխայի մեջ ազգային ու քրիստոնեական ոգի, գիտակցություն եւ նկարագիր կերտել, զորացնել սերը հանդեպ Եկեղեցին: Բայց ջանքերը չեն կարող ամբողջական արդյունք ունենալ առանց ընտանիքի ներգրավվածության: Երեխան, որ հասակ է առնում եւ ընտանիք կազմում, իր ստացած արժեքները պետք է փոխանցի իր զավակին: Եկեղեցի-ընտանիք փոխլրացնող աշխատանքով կարող ենք արդյունք ունենալ մեր զավակների քրիստոնեական դաստիարակության գործում:

*Հարց - **Սուրբ Եկեղեցու գլխավոր առաքելությունը ո՞րն է:***

Վեհափառ Հայրապետ - Սուրբ Եկեղեցու գլխավոր առաքելությունը հոգեփրկությունն է: Տերունապատվեր այս առաքելությանը զուգընթաց՝ մեր Սուրբ Եկեղեցին իրականացնում է նաեւ ազգային ինքնության պահպանման առաքելություն:

*Հարց - **Ուզում եմ քահանա դառնալ, ի՞նչ խրատ եւ խորհուրդ կտաք:***

Վեհափառ Հայրապետ - Սովորել հոգեւոր կրթական հաստատությունում: Միայն այդ ժամանակ որոշում կայացնել, եթե համոզված եւ, որ քո մեջ բավարար սեր կա Աստծո եւ ժողովրդի հանդեպ:

*Հարց - **Արդի հասարակության մեջ ինչպե՞ս կարող ենք ուղղափառ քրիստոնյայի կյանքով ապրել:***

Վեհափառ Հայրապետ - Կարծում ենք՝ բավարար միջոցներ, ձեռնարկներ հասանելի են՝ Սուրբ Գիրքը, մեր հայրերի ժառանգությունը, որոնց պատվիրանների, պատգամների ոգով կյանքը կազմակերպելով՝ կարող եք ապրել երջանիկ,

Աստծո հետ հաղորդության մեջ: Ձեր կյանքի առանցքում պետք է լինի Աստված, որին պետք է տաք ձեր ժամանակը եւ ապրեք Նրա հետ:

*Հարց - **Ի՞նչ դեր է այսօր վերապահված կնոջը Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցում, կինը կարո՞ղ է ծառայել եւ սպասավորել որպես սարկավագուհի: Ինչո՞ւ է տղամարդուն ձեռնադրությամբ դպրական աստիճան տրվում, իսկ ես, որ որպես դպրուհի, երգում եմ դասում, չեմ ձեռնադրվում: Աշխարհը փոխվում է, հայ կինն ի՞նչ փոփոխություն կարող է ակնկալել մեր Եկեղեցուց:***

Վեհափառ Հայրապետ - Հայ կնոջ ակնկալիքների մասին դուք պետք է տեղեկացնեք՝ ձեր սպասումները բարձրաձայնելով եւ ներկայացնելով: Հայ կնոջ դերակատարությունը եւ՛ ազգային, եւ՛ եկեղեցական մեր կյանքում շատ մեծ է: Քիչ առաջ խոսում էինք ազգային ինքնության պահպանման մասին: Նախ եւ առաջ մեր զավակներին ազգային արժեքները փոխանցողը, ազգային ոգու կերտողը հայ կինն է: Բայց ձեր հարցի շեշտադրումը վերաբերում է եկեղեցական ծառայությանը, ծիսական կյանքում ներգրավվածությանը: Այսօր Մենք չենք կարող, իբրեւ Կաթողիկոս, Մեր իշխանությամբ փոփոխություն կատարել Եկեղեցու կարգում: Այդ հարցը բարձրաձայնվել է մեր առաջնորդների կողմից, քննության առարկա է դարձել ԳՀԽ-ում եւ պետք է նաեւ քննարկման նյութ դառնա Եպիսկոպոսաց ժողովում: Այնտեղ կայացված որոշման համաձայն՝ կարգադրություն կտրվի առաջնորդներին՝ ի գործադրություն:

*Հարց - **Պատմության ընթացքում մեր Եկեղեցին կարեւոր դերակատարություն է ունեցել մեր ժողովրդի կյանքում, երբ թագավորություն չի ունեցել կամ թագավորները սխալ ուղղությամբ են ընթացել: Այսօր, երբ հայրենիքում ժողովրդավարության համար պայքար է մղվում, ժողովուրդը հաճախ Եկեղեցու քայլերը չի տեսնում: Որպես հոգեւոր առաջնորդ՝ ի՞նչ քայլեր պետք է ձեռնարկի Եկեղեցին:***

Վեհափառ Հայրապետ - Մեր Եկեղեցին հասարակական տարբեր խնդիրների արծարծման, բարձրաձայնման պարագայում եւս ներկա է մեր ժողովրդի կյանքում եւ առաջնորդվում է ազգի, հայրենիքի, պետականության շահերի գիտակցմամբ: Եկեղեցին չի կարող գործել առանձին անհատների անձնական ակնկալությունների համաձայն: Մենք թանկ ենք վճարել մեր պետականության համար, եւ բոլորս ամեն կերպ պետք է ջանանք այդ պետականությունը զորեղ պահել: Եթե հասարակական շարժումներն ուղղված են պետականության հիմերի ամրապնդմանը, Եկեղեցին այնտեղ է եւ պաշտպանում է: Կամենում ենք այստեղ մի միջադեպ հիշատակել: 1980-ականների շարժումներն էին, Վազգեն Ա. երջանկահիշատակ Հայրապետը երկրորդ անգամ հանդես եկավ ելույթով եւ ահազանգեց շարժման ղեկավարներին, մեր ժողովրդին, որ սխալ ընթացքով եք առաջնորդվում: Եվ ասաց՝ հայրենիքը սկուտեղի վրա մատուցում եք թշնամուն:

Այդ արտահայտությունը չընկալվեց ոչ շարժման ղեկավարության, ոչ ժողովրդի կողմից: Հայոց Հայրապետի նկարները փողոցում նետված տեսանք, մարդիկ քայլում էին դրանց վրայով եւ ամեն տեսակի արտահայտություններ թույլ տալիս: Երբ երեկոյան հանդիպեցինք Հայոց Հայրապետին, ասացինք. «Վեհափառ Տեր, ժողովուրդն այս պահին, այս զգացմունքներով, առողջ, ողջամիտ խոսք ընկալելու ունակ չէ»: Վեհափառ Հայրապետը մի պատասխան տվեց, որը հպարտությամբ լցրեց Մեր հոգին: Ասաց. «Ես չեմ կարող հուզական ալիքի վրա էժան հեղինակություն վաստակել: Եթե տեսնում եմ, որ իմ ժողովուրդը գնում է դեպի գահավիժում, պատրաստ եմ ձեռքերս տարածած կանգնել նրա առջեւ: Եվ եթե չեմ կարող փրկել գահավիժումից, թող իմ վրայով անցնեն ու գնան»: Պատասխանատվության այս զգացումով ենք առաջնորդվում Մեր կյանքում: Հնարավոր է՝ մարդիկ այդպես չգնահատեն Մեր գործունեությունը: Բայց այդ գիտակցությամբ, այդ ոգով գործել ենք եւ պիտի գործենք:

*Հարց - **Ո՞ր պահին եք զգում, որ մոտ եք Տիրոջը:***

Վեհափառ Հայրապետ – Երբ աղոթքի մեջ եմ եւ ծառայության:

*Հարց - **Ձեր եւ մեր ժամանակի երիտասարդները ինչո՞վ են տարբերվում:***

Վեհափառ Հայրապետ - Որտեղ ես եմ հասակ առել, Աստծո մասին խոսել չէր կարելի, հոգեւոր կյանքը պարփակված էր Եկեղեցու պատերի մեջ եւ ընտանիքների շրջանակում: Ես իմ հոգեւոր առաջին ապրումներն ունեցել եմ իմ ընտանեկան հարկից ներս: Այսօր, փառք Աստծո, դուք ունեք ընտրության ազատություն: Մենք ուրախ ենք, որ մեր երիտասարդությունը նախանձախնդրորեն ներգրավված է եկեղեցական կյանքում, եւ այդ շարժումը զորանում է Հայաստանում: Վստահ եմ այստեղ էլ է նույնը, որովհետեւ ինչ առաջընթաց արձանագրում ենք Հայաստանում, իր արձագանքը անմիջապես գտնում է Սիյոնում:

*Հարց - **Երիտասարդներից շատերը կարծում են, որ աղոթելու համար պարտադիր չէ Եկեղեցի գնալ, դա կարելի է անել ցանկացած տեղ:***

Վեհափառ Հայրապետ - Աղոթել կարելի է ամեն տեղ, բայց այն շնորհները, որ բաշխվում են հավատացյալին, բաշխվում են միայն Եկեղեցում:

*Հարց - **Ի՞նչ կասեք հրաժեշտից առաջ:***

Վեհափառ Հայրապետ - Մեծապես ուրախ ենք այս հանդիպման համար, նման հանդիպումները մեզ ոգեւորում, խանդավառում են, ուրախություն բերում մեր հոգուն ու սրտին: Ծառայությունը երիտասարդ սերնդին մեր նվիրական առաքելությունն է, երիտասարդությունը մեր կյանքի խանդավառությունն է, եւ գնահատում ենք, որ առաջնորդ Սրբազանն այսպիսի շեշտադրում է կատարել իր հոգեւոր ծառայության մեջ՝ քրիստոնեական անհրաժեշտ կրթություն ջամբել մեր պատանիներին եւ երիտասարդներին, որպեսզի զորանաք, աճեք, կրթվեք

ու դաստիարակվեք քրիստոնեական մեր հավատքով, ազգային արժեքներով եւ լինեք մեր Եկեղեցու, հայրենիքի ու ժողովրդի արժանավոր զավակներ: Մեր աղոթքն ու բարեմաղթանքն ենք բերում ձեզ՝ պատգամելով, որ շարունակեք կրթել ձեր անձերը, որպեսզի ձեր ամբարած գիտելիքի պաշարով, ձեր մեջ ձեւավորված քրիստոնեական արժեհամակարգով ու վսեմ ոգով կարողանաք փոխել մեր կյանքը եւ մեր աշխարհը: Աստված օգնի ձեզ:

Հոկտեմբեր 29

Հոկտեմբերի 29-ին՝ Սուրբ Խաչի գյուտի տոնի օրը, ԱՄՆ Հայոց արեւմտյան թեմի առաջնորդանիստ Սրբոց Ղեւոնդյանց Մայր եկեղեցում, որի օծումը Ամենայն Հայոց Հայրապետի ձեռամբ տեղի է ունեցել 7 տարի առաջ՝ Խաչվերացի տոնին, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մատուցեց Սուրբ Պատարագ:

Պատարագին ներկա էին թեմի հոգեւոր դասի ներկայացուցիչները՝ թեմական առաջնորդ Գերաշնորհ Տ. Հովնան արք. Տերտերյանի գլխավորությամբ, թեմական ու ծխական վարչությունների անդամներ, ազգային հաստատությունների ներկայացուցիչներ, պետական այրեր, բազմաթիվ հավատացյալներ:

Բարեպաշտ ժողովրդին ուղղված իր քարոզում Վեհափառ Հայրապետն անդրադարձավ մեր ժողովրդի անցյալում եւ ներկայում Քրիստոսակիր Սուրբ Խաչի նշանակությանը: Ամենայն Հայոց Հայրապետը շեշտեց, որ առկա դժվարություններն ու խնդիրները հաղթահարելի են առ Աստված ապավինությամբ եւ խաչի խորախորհուրդ զորությամբ: Հայոց Հայրապետը բարձր գնահատեց Հայրենիքին, սիրիահայ եւ իրաքահայ մեր եղբայրներին ու քույրերին ամերիկահայության կողմից ցուցաբերվող զորակցությունը՝ հորդորելով, որ ապավինած Տիրոջ խաչի փրկաբեր զորությանը՝ հաստատուն մնան Քրիստոսաշունչ հավատքի եւ ազգային ու հայրենանվեր կյանքի մեջ, հավատարմորեն պահեն ավետարանական Աստվածաշնորհ պատգամները եւ պահպանեն հայրենավանդ սրբությունները:

Նույն օրը երեկոյան հովվապետական այցի առիթով տեղի ունեցավ պաշտոնական ճաշկերույթ, որին ներկա էին հոգեւորականներ, Լոս Անջելեսի քաղաքապետ տիար Էրիկ Գարսեթին, ԱՄՆ-ում ՀՀ դեսպան տիար Գրիգոր Հովհաննիսյանը, պետական այրեր, բարերարներ, հավատացյալ հայորդիներ: Ճաշկերույթի ընթացքում ցուցադրվեցին ԱՄՆ Հայոց թեմի 90-ամյակին նվիրված ֆիլմը եւ «Շողակաթ» հեռուստաընկերության պատրաստած ֆիլմը Հառիճավանքի Թրբանճյան ընծայարանի մասին:

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի
հովվապետական այցը ԱՄՆ Հայոց արեւմտյան թեմ՝
հիմնադրման 90-ամյա հոբելյանի առթիվ

«Խաչը մեզ համար եղավ գիր ու մշակույթ, եղավ զենք, երբ ուզեցին մեզ կործանել,
եղավ դժվարությունները հաղթահարելու ուժ եւ վերածնվելու զորություն»

Հանդիսության ընթացքում Հառիճի «Թրբանճյան ընծայարանի» շրջանավարտ, Գեւորգյան Հոգեւոր ճեմարանի ուսանողները հանդես եկան հոգեւոր ու ժողովրդական հոգեթով երգերի կատարումներով: Հանդիսության ավարտին Վեհափառ Հայրապետն իր հայրական խոսքն ու պատգամն ուղղեց ներկաներին՝ իր ուրախությունը, շնորհավորանքներն ու բարեմաղթանքները հայտնելով ԱՄՆ Հայոց արեւմտյան թեմի հաստատման 90-ամյակի առիթով: Նորին Սրբությունն անդրադարձավ ամերիկահայ համայնքի անցած դժվարին ուղուն, գրանցված հաջողություններին, ինը տասնամյակների ընթացքում թեմի եկեղեցաշեն ու ազգօգուտ իրագործումներին: Վեհափառ Հայրապետը բարձր գնահատեց Հայրենիքի առջեւ ծառացած մարտահրավերների հաղթահարման ճանապարհին ամերիկահայության ջանքերն ու ներդրումները, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ծրագրերին սատարումը եւ ամերիկաբնակ նվիրյալ հայորդիների զորակցությունը մեր Սուրբ Եկեղեցու առաքելությանը: Նորին Սրբությունը հորդորեց նույնանման խանդավառ նախանձախնդրությամբ շարունակել աջակցել Մայր Հայրենիքին ու Սուրբ Եկեղեցուն:

Հանդիսավոր ճաշկերույթի առիթով ի մասնավորի գնահատանք հայտնելով հարգարժան տեր եւ տիկին Ժիրայր եւ Փաթրիսիա Թրբանճյաններին՝ Նորին Սրբությունը գոհունակությամբ անդրադարձավ նրանց բարի ու հայանվեր ձեռնարկներին, եկեղեցաշեն ու ազգօգուտ ծրագրերի համար սրտաբուխ նվիրատվություններին: Բարձրորեն գնահատելով Թրբանճյան ընտանիքի մեծագույն վաստակը ազգային-եկեղեցական անդաստանում՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը տիար Ժիրայր Թրբանճյանին շնորհեց «Ասպետ Սուրբ Էջմիածնի» հայրապետական բարձր շքանշանը:

Ստորեւ ներկայացնում ենք Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից հընթացս Սուրբ Պատարագի խոսված քարոզն ամբողջությամբ.

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՔԱՐՈԶԸ ՍՈՒՐԲ ԽԱՉԻ ԳՅՈՒՏԻ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

(29 հոկտեմբերի 2017 թ., Բրրբենք, Սրբոց Ղեւոնդյանց առաջնորդանիստ Մայր եկեղեցի)

«Այլ ինձ քաւ լիցի պարծել, բայց միայն ի խաչն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»
«Քաւ լիցի, որ ես պարծենամ այլ բանով, քան միայն մեր Տէր Յիսուս Քրիստոսի խաչով» (Գաղ. Զ. 14):

Գոհունակության եւ բերկրանքի անհուն զգացումներով է լցված Մեր հոգին, սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ, քանզի վերստին Տիրոջից շնորհ ունենք՝ սրբա-

զան Պապարագ մատուցելու Սրբոց Ղեւոնդյանց առաջնորդանիստ Մայր եկեղեցում եւ հայրապետական Մեր սերն ու օրհնությունը բերելու ձեզ տիրահնամ ձեր թեմի հաստատման 90-ամյակի առիթով:

Ձերմ զգացումներով ենք հիշում նվիրական այս եկեղեցու օծման հանդիսավոր արարողությունը 2010 թվականին: Հայրապետիս համար ուրախություն է կրկին տեսնել ձեզ պայծառ դեմքերով, քաջալեր հոգով, լի հավատքի ապրումներով ու հուսառատ լավատեսությամբ եւ ձեզ հետ միասին փառաբանել Տիրոջը՝ որ ամենակեցույց Իր խաչի հովանու ներքո պահել ու պահպանել է ամերիկահայ համայնքը:

Այսօր Սուրբ Խաչի գյուտի բերկրալի տոնն է: Մեր Տիրոջ խաչափայտը, որը քրիստոնյաների հակառակորդների կողմից թաքցվել ու թաղվել էր Գողգոթայում, աստվածային նախախնամությամբ գտնվեց: Տիրոջ խաչափայտը ճանաչվեց մահացածին կյանք ու հիվանդներին բժշկություն պարգեւելու հրաշագործությամբ: Խաչի գյուտի սքանչելի իրադարձության ականատեսների հետ այսօր օրհնաբանում ենք Փրկչին, որ խաչով մարդկությանը շնորհել է քավություն, փրկություն ու հավիտենական կյանք:

Տիրոջ խաչը պատմության բոլոր ժամանակներում մեր ժողովրդի համար եղավ նվիրական նշան, որի զորությանն ապավինած՝ ապրեցինք ու արարեցինք, դիմագրավեցինք փորձություններին ու նեղություններին: Խաչը մեզ համար եղավ գիր ու մշակույթ, եղավ զենք, երբ ուզեցին մեզ կործանել, եղավ դժվարությունները հաղթահարելու ուժ եւ վերածնվելու զորություն: Խաչով վերապրեցինք ցեղասպանությունը եւ հարուցյալ մեր նոր կյանքը կերտեցինք հայրենյաց հողում ու աշխարհի տարբեր կողմերում: Դժվարությունների հանդիման, ձեռքբերումների ու հաղթանակների մեջ միշտ բարձր պահեցինք խաչի պարծանքը՝ ըստ առաքյալի խոսքի. «Քաւ լիցի, որ ես պարծենամ այլ բանով, քան միայն մեր Տէր Յիսուս Քրիստոսի խաչով»: Սրբոց Ղեւոնդյանց նահատակների նվիրական անունը կրող այս եկեղեցին նույնպես մեր հայրերի հավատքի ոգին ու ավանդն է փոխանցում մեզ: Հիրավի, մեր ինքնությունը, գոյությունն ու հարատեւությունը հիմնված են խաչանշան մեր հավատքի եւ խաչադրոշմ մեր հայրենիքի ու հայրենյաց ժառանգության վրա, որոնք այսօր էլ ազգային եւ հոգեւոր-բարոյական մեր նկարագրի առհավատչյան են, ապրելու, պայքարելու, հաղթելու մեր ուժն ու գրավականը: Խաչի հաղթական զորությունը իրենց սրտերում ու հոգիներում, իրենց զգեստների վրա խաչի նշանը կրելով մեր ժողովրդի քաջարի զավակները ազատագրեցին Արցախը: Այդ հավատքով վերահաստատեցինք մեր անկախ պետականությունը եւ հակառակ բոլոր դժվարությունների՝ շարունակում ենք առաջընթացի ու բարօրության տեսլականով վերակերտել մեր կյանքը, պաշտպանել մեր սահմաններն ու հայրենիքի խաղաղությունը:

Հավատքի նույն ոգով են պատերազմական արհավիրքներն այսօր հաղթահարում սիրիահայ եւ իրաքահայ մեր եղբայրներն ու քույրերը, որոնց զորակից ու

աղոթակից է հայրենաբնակ եւ աշխարհասփյուռ մեր ողջ ժողովուրդը:

Սիրելինե՛ր, ծանր ու դժվարին փորձություններ վիճակվեցին եւ ձեր հայրերին, ովքեր ցեղասպանությունը վերապրելով՝ ապաստան գտան Միացյալ Նահանգներում: Նրանք իրենց կրած խաչը պսակեցին հարությամբ, նոր կյանք կերտեցին, կառուցեցին եկեղեցիներ, հիմնեցին դպրոցներ, ազգային, մշակութային հաստատություններ՝ տեսիլքն ունենալով, որ իրենց զավակները լինեն ուսյալ, առաջադիմող, եկեղեցանվեր ու ազգասեր, նախանձախնդիր առ հայրենին եւ հայրենյաց սրբազան ժառանգությունը: Գոհունակություն է հայրապետիս համար, սիրելի՛ բարեպաշտ հայորդիներ, որ իրականություն է դարձել ձեր հայրերի նվիրական տեսլականը: Այսօր դուք՝ արժանավոր զավակներդ ձեր հայրերի, կոչված եք կրելու հավատքի ու ազգային արժեքների պաշտպանության խաչը, արդյունավորելու հայապահպանության, երիտասարդ սերնդին հայրենական ավանդներով եւ քրիստոնեական արժեքներով կրթելու առաքելությունը, նպաստելու հայ դատի, Արցախի ժողովրդի ազատ ապրելու իրավունքի հաղթանակին: Քրիստոնյա հայորդիներս, որ ապրել ենք ցավը հայրենազրկության եւ ողբերգությունը ցեղասպանության, կոչված ենք հավատքի վկայություն բերելու, որ աշխարհում զորանան խաղաղության, համերաշխության ուղիները, արդար խորհուրդներն ու գործերը:

Հավատքի սակավությունն է հանգեցնում հանցագործությունների ու անմարդկային ոճրագործությունների, ինչպես վերջերս տեղի ունեցած Լաս Վեգասի ողբերգությունն էր: Աշխարհը ցնցող ահաբեկչությունների ալիքը, բնական աղետները պատուհասում են նաեւ Ամերիկայի բնակչության կյանքի ընթացքը: Այդ փորձությունները հաղթահարելի են առ Աստված ապավինությամբ, արարչության եւ մերձավորի հանդեպ սիրով, հավատքի գործերով, որի վկայությունը բերում եք Ամերիկայի հավատավոր հայորդիներդ: Դուք արժանավոր քաղաքացիներն եք Միացյալ Նահանգների եւ հասարակական կյանքին ձեր նշանակալի ներդրումով վայելում եք իշխանությունների եւ այս երկրի բազմամշակույթ ժողովրդի հարգանքն ու վստահությունը: Այդ իրողության վկայությունն է պետական այրերի եւ քույր Եկեղեցիների ներկայացուցիչների մասնակցությունը այսօր սրբազան Պատարագի արարողությանը, որի համար ողջունում եւ գնահատանքի մեր խոսքն ենք ուղղում նրանց եւ մաղթում Տիրոջ խաչից տարածվող խաղաղությունը, օրհնությունն ու շնորհները:

Սիրելի՛ բարեպաշտ հայորդիներ, Խաչի գյուտի հոգենորոգ այս տոնին Մեր հորդորն ենք բերում ձեզ, որ շարունակեք հաստատուն մնալ ձեր հավատքի մեջ, հավատարմորեն պահեք ավետարանական պատգամները եւ ազգային սրբությունները: Անսահման սիրով ավանդ բերեք մեր Սուրբ Եկեղեցու պայծառությանը, հայրենի մեր երկրի բարօրությանը, համազգային մեր նպատակների ու իղձերի իրականացմանը, Տիրոջից ձեզ շնորհված կարողություններն ու հնարավորությունները արժեւորեք աստվածահաճո իրագործումներով: Աստված մեզ կյանքի

շնորհն է պարգեւել՝ ապրելու մերձավորի համար, ազգի ու հայրենիքի համար, ապրելու զոհողության գիտակցությամբ ու նվիրումով: Եկող տարի նշելու ենք 100-ամյակը Սարդարապատի հերոսամարտի, որ մեր անկախության ու ազատ կյանքի պայքար ու խորհրդանիշ լինելով՝ խաչի հաղթանակ էր, խաչի պարծանքը մեր հավատավոր ժողովրդի եւ այսօր պատգամ է նույն սիրով ու նվիրումով ապրելու եւ կերտելու հզոր, զարգացող ու բարգավաճ Հայաստան, Արցախ եւ Սփյուռք:

Այս մաղթանքով ու Բարձրյալի զորակցության հայցով հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում ԱՄՆ Հայոց արեւմտյան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Հովնան արք. Տերտերյանին՝ իր առաքելության մեջ արձանագրած հաջողությունների ու ձեռքբերումների համար: Մեր սերն ու գնահատանքն ենք հղում հոգեւոր սպասավորներին, թեմական ու ծխական խորհուրդների անդամներին, ազգային ու հոգեւոր կյանքի կազմակերպման գործում ներգրավված հավատավոր հայորդիներին ու ամերիկահայ մեր սիրեցյալ բոլոր զավակներին:

Աղոթում ենք, որ Աստված խաղաղություն պարգեւի աշխարհին, խաղաղ պահի Միացյալ Նահանգները եւ համայն մեր ժողովրդին: Թող Բարձրյալի երկնաառաք շնորհները առատորեն հեղվեն ընտանեկան ձեր հարկերից ներս, հավատքով պայծառացնեն ձեր հոգիները՝ միշտ փառաբանելու Տիրոջ հրաշագործ սուրբ խաչը այսօր եւ միշտ. ամեն:

Հոկտեմբեր 30

Հոկտեմբերի 30-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի գլխավորած պատվիրակությունը հովվապետական այցով ժամանեց Մեքսիկայի մայրաքաղաք Մեխիկո: Մեքսիկայի սակավաթիվ հայ համայնքը ձեւավորվել է դեռեւս Հայոց ցեղասպանությանը հաջորդող տարիներին: Ներկայում Մեքսիկայի հայ համայնքի թիվը բավականին փոքր է՝ շուրջ 1500 հայեր՝ կենտրոնացած հիմնականում Մեխիկո քաղաքում: Վեհափառ Հայրապետը Մեխիկոյում ջերմ ընդունելության արժանացավ: Հայրենի հող ու ջրից հեռու ապրող հայորդիները խանդավառ ցնծությամբ ընդունեցին ազգիս Հայրապետի ներկայությունը՝ մաս եւ բաժին առնելով Նորին Սրբության աստվածաշնորհ օրհնություններից ու պատգամներից:

Օդանավակայանում Նորին Սրբությանը դիմավորեցին Մեքսիկայում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան տիար Արա Այվազյանը, Մեքսիկայի Մարոնիտ Եկեղեցու արք. Ջորջ Աբի Յունեսը, Մեքսիկայի հայ համայնքի հոգեւոր հովիվ Հոգեշնորհ Տ. Սասուն ծ. վրդ. Զմրուխտյանը, հայ համայնքի անդամներ:

Օդանավակայանից Նորին Սրբությունն ուղեւորվեց ՀՀ դեսպանատուն, հանդիպում ունեցավ դեսպանատան աշխատակիցների հետ: Տակավին երեք տարի առաջ հիմնված հայկական դեսպանատունը մեծ դեր է ունեցել Մեքսիկայում ապրող հայերի միավորման, հայապահպանության ազգանվեր գործում՝ ցայսօր իրականացնելով հայոց մշակույթի զարգացմանը սատարող տարաբնույթ միջոցառումներ: Դեսպանատնից հետո Հայոց Հայրապետն այցելեց Գուադալուպեի եկեղեցի, որտեղ տեղի հոգեւորականների հետ աղոթք բարձրացվեց առ Աստված: Նորին Սրբությունը հանդիպում ունեցավ նաեւ Մեխիկոյի քաղաքապետ Միգել Անխել Մանսեռայի հետ:

Այնուհետեւ Մեխիկոյի կաթոլիկ Մայր Տաճարում տեղի ունեցավ միջեկեղեցական աղոթք, որին ներկա էին Մեքսիկայի կարդինալ Նորբերտո Ռիվերա Կառեռան, պապական նվիրակ Ֆրանկո Կոպպոլան, քույր Եկեղեցիների եւ պետական իշխանությունների ներկայացուցիչներ, բազմաթիվ բարեպաշտ հավատացյալներ: Արարողության ընթացքում քառաձայն գեղեցիկ երգեցողությամբ ելույթ ունեցավ ԱՄՆ Հայոց արեւմտյան թեմի Սրբոց Ղեւոնդյանց եկեղեցու երգչախումբը: Նորին Սրբությունը հանդես եկավ պատգամով՝ հայրապետական իր օրհնությունն ու ողջույնը բերելով ներկաներին: Հայոց Հայրապետը ցավ հայտնեց վերջերս Մեխիկոյին պատուհասած երկրաշարժի կապակցությամբ՝ խորապես կիսելով բարեկամ ժողովրդի վիշտը: Վեհափառ Հայրապետն իր խոսքում մասնավորապես ասաց. «Հույսով ուրախացեք, նեղության համբերեցեք, հաճախակի աղոթեցեք (Հռոմ. ԺԲ. 12): Որպես հոգեւոր դարման եւ սփոփանք մեր առջեւ ծառացող ամեն մարտահրավերի ու դժվարության հաղթահարման՝ Ս. Պողոս առաքյալի այս խոսքերն ենք փոխանցում ձեզ՝ կյանքը լուսավորելու տերունապարգեւ հույսով եւ օրհնությամբ: Մեր ժողովուրդը եւս կրել է աղետալի երկրաշարժի պատուհասած ցավը 1988 թ.: Այդ օրերի դառնությունը տակավին չի ջնջվել մեր ժողովրդի հավաքական հիշողությունից, սակայն հայրենի մեր երկիրը եւ մեր կյանքը վերականգնված տեսնելու վճռականությունը, մեզ օգնության հասած բարեսեր մարդկանց, մարդասիրական կազմակերպությանց եւ բարեկամ երկրների պարգած օգնության ձեռքը, դրսեւորած սերն ու կարեկցանքը, հոգեւոր միսիթարությունն ու քաջալերությունը մեզ համակեցին լավատեսությամբ, լցրեցին զորությամբ՝ համբերությամբ ու աղոթքով լծվելու նոր կյանքի կերտմանը:*

Սիրելինե՛ր, հայ ժողովրդի այս վկայությունն ենք կամենում փոխանցել ձեզ. մի ժողովուրդ, որի կյանքը պատմության արահետներում, հակառակ անհամար փորձությունների, դժվարությունների, որոգայթների եւ կոտորածների, միշտ էլ եղավ հարության, առ Աստված ապավինության եւ վերաշինության պատմություն:

Առ Աստված հավատքով եւ քրիստոնեական առաքինության նկատմամբ ամենայն նախանձախնդրությամբ Մեքսիկայի ժողովուրդը, որի անքակտելի մասն է կազմում նաեւ մեր հայ համայնքը, այսօր նույնպես աղետի հետեւանքները վերացնելու գործին լծված է հույսով, զոհվածների հարազատներին սփոփելու եւ վիրավորներին դարմանելու ծանր առաքելության մեջ զինված է աղոթքով ու համբերությամբ՝ հաղթահարելու Մեքսիկայի պատմության մեջ դժվարին այս փորձությունը: Մեր մաղթանքն է, որ Տերն Իր ամենազոր Աջի ներքո պահի Մեքսիկայի Կաթոլիկ Եկեղեցին, զորացնի բարեջան հոգեւոր սպասավորներին երկնավոր Վարդապետի կողմից իրենց վստահված կոչման մեջ՝ անսպառ սիրով ու կարեկցությամբ, հոգեւոր մխիթարությամբ եւ հույսով սփոփելու համար Մեխիկոյի ասպվածասեր ժողովրդին, դարմանելու աղետալի երկրաշարժի հետեւանքով պատճառված հոգեւոր, բարոյական ու նյութական վնասները»: ***Հայոց Հայրապետը քաջալերություն ու մխիթարություն մաղթեց Մեքսիկայի ժողովրդին եւ աղոթք վերառաքեց առ Աստված զոհվածների հոգիների խաղաղության համար:***

Արարողությունից հետո Նորին Սրբությունն այցելեց Մեխիկոյի «Հիշողության եւ հանդուրժողականության թանգարան», որտեղ ներկայացված են Ի. դարի ցեղասպանությունների, այդ թվում եւ Հայոց ցեղասպանության մասին պատմող հոգեխռով ցուցանմուշներ: Թանգարանի հանդիսությունների սրահում, ի պատիվ Վեհափառ Հայրապետի պատմական եւ հույժ սպասելի այցելության, ընդունելություն էր կազմակերպվել Մեխիկոյի հայ համայնքի երախտավորների կողմից:

Ի թիվս այլոց՝ հանդիպմանը ներկա էին նաեւ ՀՀ դեսպան Արա Այվազյանը, քաղաքային իշխանությունների եւ քույր Եկեղեցիների ներկայացուցիչներ: Ներկաներին բարիգալստյան ու ողջույնի խոսք ասաց ՀՀ դեսպանը: Համայնքի անդամները եւս հանդես եկան ողջույնի խոսքերով՝ իրենց խանդավառությունն ու ուրախությունը հայտնելով Վեհափառ Հայրապետի այցելության առիթով: Նորին Սրբությունը ողջունեց այս հանդիպմանը քույր Եկեղեցիների ներկայացուցիչների, պետական այրերի ներկայությունը, իր օրհնությունը բերեց հայ համայնքին՝ արտահայտելով իր մեծ բերկրանքն ու ջերմագին տպավորությունները այցելության առիթով: Հավարտ միջոցառման Ամենայն Հայոց Կաթողիկոսը մաղթեց մեքսիկահայ հայորդիներին հաստատուն մնալ իրենց եկեղեցանվիրումի ու ազգանվիրումի մեջ՝ հավատքով ամուր, սիրով միասնական:

Նոյեմբեր 1-3

Նոյեմբերի 1-3-ը Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ ԱՄՆ Հայոց արեւմտյան

«Հույսով ուրախացեք, նեղության համբերեցեք, հաճախակի աղոթեցեք (Հռոմ. ԺԲ. 12) …
Ս. Պողոս առաքյալի այս խոսքերն ենք փոխանցում ձեզ՝ կյանքը լուսավորելու տերունապարգեւ հույսով եւ օրհնությամբ»

թեմի առաջնորդարանում տեղի ունեցավ Գերագույն հոգեւոր խորհրդի հերթական ժողովը, որը թվով չորրորդ արտագնա նիստն էր:

Ժողովն սկսվեց միասնական Տերունական աղոթքով, որից հետո թեմական առաջնորդ Գերաշնորհ Տ. Հովնան արք. Տերտերյանը թեմի հոգեւորականների եւ աշխարհականների անունից բարի գալուստ մաղթեց Նորին Սրբությանը եւ ԳՀԽ անդամներին՝ անդրադառնալով թեմի հիմնադրման 90-ամյակի առիթով Վեհափառ Հայրապետի կատարած հովվապետական այցի մանրամասներին: Սրբազան Հայրը շեշտեց, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատմական այս այցը մեծ ուրախություն եւ խանդավառություն է առաջացրել ԱՄՆ Հայոց արեւմտյան թեմում՝ զորացնելով սերը եւ նվիրումը Ս. Էջմիածնի եւ հայրենիքի հանդեպ: Նա վստահեցրեց, որ Վեհափառ Հայրապետի այցից հետո վերանորոգված հավատքով, նվիրումով եւ սիրով պիտի շարունակեն իրենց առաքելությունը՝ ի շահ Հայոց Եկեղեցու պայծառության եւ բարգավաճման:

Այնուհետեւ ԳՀԽ անդամներին հայրապետական իր օրհնությունն ու պատգամը բերեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Նորին Սրբությունը հատկապես շեշտեց, որ հովվապետական այս այցի առանցքում հայ պատանիներն ու երիտասարդներն էին: Վեհափառ Հայրապետն ուրախությամբ հաստատեց, որ, թեպետ հայրենիքից հեռու, նրանց մեջ զորավոր են ազգասիրությունն ու եկեղեցասիրությունը, նախանձախնդրությունը հայոց լեզվի եւ մեր ազգային արժեքների պահպանության գործում: Հայոց Հայրապետը գոհունակությամբ անդրադարձավ Մեքսիկա կատարած հովվապետական իր անդրանիկ այցին, ուր հայրապետական օրհնություն բաշխեց տեղի հայությանը, նաեւ միասնական աղոթք վերառաքվեց առ Աստված՝ ի խաղաղություն աղետաբեր երկրաշարժի հետեւանքով զոհվածների հոգիների եւ ի մխիթարություն ու ի սփոփանս սգակիր վշտաբեկ հարազատների:

Հովվապետական այցի ժամանակ ցուցաբերած ջերմ ընդունելության եւ հյուրընկալության համար Վեհափառ Հայրապետն ի մասնավորի իր գնահատանքը հայտնեց Տ. Հովնան արք. Տերտերյանին, թեմական խորհրդի ատենապետ Տիար Հովսեփ Կանիմյանին, թեմի հոգեւոր սպասավորներին եւ աշխարհական անձանց:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհավորեց նաեւ ԳՀԽ նորընտիր կազմին՝ մաղթելով արդյունաշատ եւ բեղուն աշխատանք:

Ժողովի նիստերն ատենապետեցին ԱՄՆ Հայոց արեւմտյան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Հովնան արք. Տերտերյանը եւ ԱՄՆ Հայոց արեւելյան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Խաժակ արք. Պարսամյանը:

Օրակարգի հաստատումից հետո ընթերցվեց եւ հաստատվեց նախորդ՝ 2017 թ. մայիսի 16-17-ին գումարված ԳՀԽ ժողովի արձանագրութ-

յունը: Այնուհետեւ Գերագույն հոգեւոր խորհուրդը քննարկեց ԳՀԽ կանոնադրության լրամշակված նախագիծը՝ պատրաստված Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու կառավարման բարձրագույն մարմինների կանոնադրությունների մշակման հանձնախմբի կողմից: Նախագծի վերաբերյալ անհրաժեշտ լուսաբանություններ կատարեցին հանձնախմբի անդամներ Գերաշնորհ Տ. Հովնան արք. Տերտերյանը, Գերաշնորհ Տ. Արշակ եպս. Խաչատրյանը եւ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր տիար Գեւորգ Դանիելյանը: Ժողովականներն իրենց դիտարկումներն ու սրբագրություններն առաջարկեցին կանոնադրության հոդվածների վերաբերյալ: Գերագույն հոգեւոր խորհուրդը որոշեց խմբագրական աշխատանքից հետո կանոնադրության նախագիծն առաքել թեմեր՝ առաջարկությունների եւ դիտարկումների համար:

Հայոց Եկեղեցու գործառնությունների բարելավման ծրագրի ընթացքի ներկա վիճակի վերաբերյալ Գերագույն հոգեւոր խորհրդին զեկուցեց «Դավիդյան» հիմնադրամի նախագահ եւ բարերար տիար Ասո Դավիդյանը: Նա տեղեկացրեց, որ նախապատրաստական փուլի աշխատանքներն արդեն իսկ ավարտված են, եւ առաջիկա ամիսներին նա հանդիպումներ ու հարցազրույցներ կունենա թեմական առաջնորդների, Մայր Աթոռում սպասավորող մի շարք հոգեւորականների եւ աշխարհականների հետ: Այս առիթով ԳՀԽ անդամները գոհունակություն հայտնեցին տիար Ասո Դավիդյանին կատարած աշխատանքի համար՝ հույս հայտնելով, որ ուսումնասիրության արդյունքները կնպաստեն Հայ Եկեղեցու գործառնությունների առավել արդյունավետ կազմակերպմանը:

Վեհափառ Հայրապետի կողմից 2018 թ. հռչակվել է որպես երիտասարդության տարի: Այս ուղղությամբ նախատեսվող աշխատանքների մանրամասները ներկայացրեց ԱՄՆ Հայոց արեւմտյան թեմի առաջնորդ եւ Հայ Եկեղեցու համաշխարհային երիտասարդաց միավորման ատենապետ Գերաշնորհ Տ. Հովնան արք. Տերտերյանը: Սրբազան Հայրը նշեց, որ տարվա ամփոփումը կլինի հուլիսի 5-8-ը դեպի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին նախատեսված համընդհանուր ուխտագնացությունը: Տարվա ընթացքում նույնպես թեմական առաջնորդների նախաձեռնությամբ կկազմակերպվեն երիտասարդական ուխտագնացություններ դեպի Ս. Էջմիածին:

ԳՀԽ ժողովի ընթացքում թեմական խորհրդի անդամների հետ համատեղ նիստ գումարվեց, որի ժամանակ ԱՄՆ Հայոց արեւմտյան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանն ընդհանուր զեկույց ներկայացրեց թեմի գործունեության եւ իրականացվող ծրագրերի վերաբերյալ:

Ժողովի վերջում Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ անդրադարձավ ԳՀԽ անդամների արդյունավետ աշխատանքին՝ ի նպաստ

Եկեղեցու առջեւ ծառացած մարտահրավերների հաղթահարման: Նորին Սրբությունն իր մասնավոր գնահատանքն ու օրհնությունն ուղղեց նաեւ ԱՄՆ Հայոց արեւմտյան թեմի առաջնորդին եւ թեմական խորհրդի անդամներին՝ հովվապետական այցը եւ ԳՀԽ նիստերը հավուր պատշաճի կազմակերպելու համար՝ առ Աստված աղոթք հղելով թեմի պայծառության եւ հավատացյալ ամերիկահայերի կյանքի բարօրության համար:

Գերագույն հոգեւոր խորհրդի ժողովն ամփոփվեց Պահպանիչ աղոթքով:

Նոյեմբեր 3

Նոյեմբեր 3-ին Ամերիկայի Միացյալ Նահանգների Հայոց արեւմտյան թեմի առաջնորդանիստ կենտրոնում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ամերիկայի Հայ ավետարանչական ընկերակցության (ԱՀԱԸ) հոգաբարձուների խորհրդի, Հայ ավետարանական համաշխարհային խորհրդի, Հյուսիսային Ամերիկայի Հայ ավետարանական եկեղեցիների միության, Հայկազյան համալսարանի հոգաբարձուների խորհրդի ներկայացուցիչներին:

Վերջիններս խորին երախտագիտություն հայտնեցին Նորին Սրբությանը՝ ԱՄՆ Հայոց արեւմտյան թեմ կատարած հովվապետական այցի ընթացքում իրենց առանձին հանդիպման հնարավորություն ընձեռելու համար եւ ներկայացրին Հայ ավետարանական եկեղեցու եւ ԱՀԱԸ գործունեությունը: Նրանք անդրադարձան Մայր Եկեղեցու հետ գործակցության անհրաժեշտությանը եւ պատրաստակամություն հայտնեցին ապագայում իրենց առաքելությունն առավել ջանասիրաբար ի գործ դնել՝ ի նպաստ աշխարհասփյուռ հայության հոգեւոր կյանքի միության, արձագանքելով մեկ լինելու Տիրոջ պատգամին:

Վեհափառ Հայրապետը գոհունակություն հայտնեց հանդիպման համար եւ իր օրհնության խոսքն ուղղեց Հայ ավետարանական եկեղեցու ներկայացուցիչներին: Նորին Սրբությունը հատկապես ընդգծեց վերջին շրջանում Հայ ավետարանական եկեղեցու պատասխանատուների կողմից Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հետ միության մեջ գործելու պատրաստակամ ոգին, որով միայն հնարավոր է ամրապնդել հոգեւոր եւ ազգային միասնականությունը:

Եզրափակելով խոսքը՝ Հայոց Հայրապետը հույս հայտնեց, որ Հայ ավետարանական եկեղեցին նոր արդյունքներով ու ձեռքբերումներով պիտի շարունակի համալրել բարեսիրական իր ծառայությունները՝ հանուն հայրենիքի զորացման եւ ի բարօրություն աշխարհասփյուռ հայության:

***

Վեհափառ Հայրապետի շնորհաբաշխ ներկայությունը ԱՄՆ Հայոց արեւմտյան թեմում մեծ ոգեւորություն եւ հոգեւոր խանդավառություն պարգեւեց ամերիկաբնակ հայորդիներին: Հարյուրավոր մանուկների, երիտասարդների եւ տարեցների, հավատացյալ բազմաթիվ հայորդիների հետ հանդիպումների ընթացքում Նորին Սրբությունը բերեց Սուրբ Էջմիածնի օրհնությունները եւ հորդորեց Միացյալ Նահանգներում բնակվող հայազգի զավակներին շարունակել առ հայրենին եւ Սուրբ Եկեղեցին ունեցած նվիրումով ապրել եւ կերտել իրենց բարօր կյանքը: